

ՇՈՒՇԱՆ ՊԱՐՈՆՅԱՆ
ՄԱՐԻՆԵ ՅԱՂՈՒԲՅԱՆ

ԶԵՂՉՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԱՅԻՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻՋՈՑ ԵՎ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

Ինչպես հայտնի է, գործաբանական լեզվաբանությունը «մարդակենտրոն» է, նրանում ելակետայինը խոսող անհատն է, որի հոգեկան աշխարհի դրսևորումների և հասարակական գործունեության հաշվառումով էլ կատարվում է խոսքի քննությունը: Ի տարբերություն այն լեզվաբանական ուսմունքների, որոնք ուսումնասիրում էին լեզվական համակարգի օրինաչափությունները, գործաբանները սկսեցին նման կարգի օրինաչափություններ փնտրել խոսքում: Եթե լեզվական համակարգին հատուկ օրինաչափությունները վերացական են և բնորոշվում են որպես այդ համակարգին բնորոշ յուրահատուկ դրսևորումներ, խոսքին հատուկ օրինաչափություններում ելակետային է խոսող անհատը. նա է կատարում խոսքային այս կամ այն միջոցի ընտրությունը, կառուցում է իր խոսքը հաղորդակցական պահանջներին համապատասխան: Խոսքն այնքան էլ ցաքուցրիվ, անկանոն չէ, ինչպես ենթադրվում էր առաջ: Այն ունի իրեն հատուկ նորմերը, որոնցով էլ պայմանավորված է խոսքային գործունեության բնականոն ընթացքը:

Ըստ գործառության մոտեցման լեզուն, որպես մարդկային հաղորդակցական միջոց, մարդու հասարակական գործունեության ձևերից մեկն է, որն իրականանում է հաղորդակցման օրինաչափությունների իմացության միջոցով: Հետևաբար, ինչպես ենթադրում է Պ. Ջերմեցկին, խոսքային գործունեության ընթացքում կարևորվում են հաղորդակցական իրադրության այն չափանիշները, որոնցով պայմանավորված է հաղորդակցման սցենարը, զրուցակիցների խոսքային վարքի ծրագրավորումն ըստ տվյալ հաղորդակցական իրադրության մեջ իրենց ունեցած դերի, զրուցակիցների խոսքային ռազմավարության և մարտավարության (Зермечкий, 1988, 36):

Լեզվաբանության մեջ ընդունված է գեղչումը դիտարկել որպես բառի բացթողման շարահյուսական հնար: Սակայն, խոսքի գործադրման տեսանկյունից դիտարկելիս հնարավոր է դառնում գեղչման երևույթը մեկնաբանել որպես խոսքային քաղաքականության դրսևորման միջոցներից մեկը: Սույն հոդվածի նպատակն է բացահայտել գեղչման գործաբանական դերը խոսքում որպես խոսքային ռազմավարության միջոց և մարտավարության դրսևորում:

խոսքային գործունեությունն իր գործառության թափանցանությանը ստեղծագործական բնույթ ունի և կախված է հաղորդակցման իրադրության պահանջներից: Ահա թե ինչու, հաղորդակցման տարբեր պահանջներից ելնելով, կատարվում է խոսքային տարբեր միավորների ընտրություն:

Հաղորդակցական գործաբանական նորմերը սահմանում են լեզվական միջոցների ընտրության և ասույթների կառուցման կանոններ տարբեր հաղորդակցական իրադրությունների համար: Դրանք դիտվում են որպես պայմանական նորմեր՝ վերացական կանոններ, որոնք դրսևորվում են հաղորդակցման գործընթացում և արտացոլում են լեզվին հատուկ առավել էական հատկանիշները: Հաղորդակցական-գործաբանական նորմերն առկա են հաղորդակցվողների մտքում ներակա ձևով և, որպես կանոն, խոսողի կողմից գիտակցվում են դրանց խախտման դեպքում:

Ըստ Ե. Անիսիմովայի, հաղորդակցական-գործաբանական նորմերի առկայությամբ են պայմանավորված խոսքը բնորոշող հետևյալ կանոնները. . .

1. Խոսքին հատուկ է խոսքային միջոցների ընտրության հնարավորությունը. այս կամ այն միտքն արտահայտելու համար, գոյություն ունեցող հնարավոր տարբերակներից ընտրվում են միայն նրանք, որոնք համապատասխանում են տվյալ հաղորդակցական իրադրության պահանջներին:

2. Հաղորդակցական նորմերի պահպանումը պարտադիր է յուրաքանչյուր խոսողի համար և, խոսքային գործունեության հաջողության նախապայմաններից մեկն է: Խոսքային իրադրության և խոսողների առջև դրված պահանջից ելնելով նորմերը կարող են տարբեր աստիճանի պարտադրականություն ունենալ: Դրանց պահպանումն ավելի կարևոր և պարտադիր է պաշտոնական ոճով կատարվող հաղորդակցության ժամանակ պաշտոնական, քաղաքական ճառեր (գրավոր և բանավոր): Նորմերը պակաս պարտադիր են ոչ պաշտոնական ոճով կատարվող հաղորդակցման ընթացքում, խոսակցական և գեղարվեստական խոսքում, որտեղ առավել գերիշխում է անհատականը:

3. Հաղորդակցական նորմերը կայուն են և պարտադիր, ինչն էլ թույլ է տալիս խոսողին ճիշտ կողմնորոշվել խոսքային ոլորտում (Анисимова, 1983, 8-15):

Եվ այնուամենայնիվ, անկախ իրենց կայունության, գործաբանական նորմերը բավականին շարժունակ են և ենթարկվում են փոփոխությունների, ինչը պայմանավորված է հասարակական կյանքի զարգացմամբ, հասարակության մեջ կատարվող փոփոխություններով, և լեզվահաղորդակցական դժվարություններով: Գոյություն ունեցող նորմերի հետ մեկտեղ, հանրության հաղորդակցական պահանջների ավելացման պատճառով ստեղծվում են նոր նորմեր, որոնք արտացոլում են մարդկային հաղորդակցման իրավիճակների բազմազանությունը:

Բանավոր դիսկուրսը երկխոսությունը, նույնպես ենթարկվում է որոշակի հաղորդակցական օրենքների: Նրանում արտացոլվում են մարդկանց վարքագծի արտաքինից աննկատ օրինաչափությունները: Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, միայն հաղորդակցական օրենքների վրա հիմնվելով է կարելի որոշարկել խոսքային ակտերի այն ընդհանրությունները, որոնք համատեքստից անկախ են (Beyer, 1976, 266): Գործաբանության առջև դրված ամենաբարդ խնդիրներից մեկը, ինչպես գիտենք, խոսքային ակտի իլոկուտիվ ուժի վերծանման խնդիրն է, ինչը, ըստ Գ. Բեքի, հեշտությամբ կարելի է լուծել հիմնվելով հաղորդակցական օրենքների վրա (Beck, 1980, 94):

Հաղորդակցման գործընթացը գիտակցաբար կանոնակարգվում է մասնակիցների կողմից, քանի որ նրանց ռազմավարությունն ու մարտավարությունը փոփոխվում է զրույցի ընթացքում՝ կախված հաղորդակցական իրադրությունից (Паронян, 2001, 95):

Առարկայական աշխարհի իմացությունը, տեղեկատվության տրամաբանական հաջորդականությունը, նորմերի և զնահատումների ընդհանրությունը, որը գոյություն ունի կոնկրետ համայնքի հասարակական գիտակցության մեջ, բերում է այն բանին, որ խոսքային գործունեության ընթացքում անպայման կիրառվում են հաղորդակցական ռազմավարությունը և մարտավարությունը:

Հաղորդակցական ռազմավարությունը լեզվական քաղաքականություն է, որում արտացոլվում է խոսող անհատի որոշակի դիրքորոշումը հաղորդակցական նպատակի վերաբերյալ և կանխորոշվում է նրա խոսքային գործողությունների որոշակի հերթականությունը՝ ըստ նախանշված պլանի:

Ըստ Ջ. Ռեհբայնի, ռազմավարության տեսանկյունից դիտելիս խոսքային ակտերի առանձին տեսակներ կարող են ձեռք բերել այլ մեկնաբանություն, քան ավանդական դասակարգումներում, քանի որ խոսքային գործողությունների իրական իմաստը բացահայտվում է դրանց փոխադարձ հարաբերությունների հիման վրա (Rehbein, 1977):

Այսպիսով՝ ռազմավարությունը վերաբերում է և խոսքաստեղծմանը, և խոսքի ընկալմանը: Սա համագործակցային հայեցակերպ է, որը հաշվի է առնում և խոսողի (զրույցի), և լսողի (կարդացողի) խոսքային/ոչ խոսքային հնարավոր գործողությունները:

Այն կարելի է դիտել նաև որպես հաղորդակցական ծրագրի ստեղծագործական իրականացում խոսքային գործունեության ընթացքում, որի նպատակն է իրագործել հաղորդակցման լեզվական կամ ոչ լեզվական խնդիրները:

Հաղորդակցական մարտավարությունը խոսքային հմտությունների ճկուն, դինամիկ օգտագործումն է խոսողի կողմից՝ ըստ նախանշված ծրագրի: Դրա նպատակը փոխադարձ խոսքային կապ՝ լեզվական համագործակցություն ստեղծելն է:

Կրկնվելով խոսքում, միատեսակ մարտավարությունները կարող են ռազմավարության կարգավիճակ ստանալ: Այսպիսով մարտավարությունը խոսքային քաղաքականության առավել մասնավոր դրսևորում է, որն արտացոլվում է խոսքային միջոցների ընտրությամբ, իսկ ռազմավարությունը խոսքի ընդհանուր նպատակային ծրագիր է. խոսքային գործունեությունն արդյունավետ դարձնելու միջոց, որը նպաստում է խոսողի հաղորդակցական նպատակների հաջող իրականացմանը (Паронян, 2001): Ուսումնասիրելով խոսքային ռազմավարության սկզբունքները Զ. Ըյմը գտնում է, որ խոսողը բազմաթիվ հնարավոր նպատակներից ընտրում է մեկը և իր խոսքային գործունեության պլանը կազմում է ըստ ընտրված նպատակի (Біхм, 1979): Ուսումնասիրության շրջանակներում, որպես կանոն, զուգակցվում են տարբեր տեսակի մարտավարություններ:

Այստեղից երևում է, որ խոսքային քաղաքականության մակարդակը բավականին բարդ և տարաբնույթ է:

Խոսքային գործունեությունն ուսումնասիրելիս անհնարին է բավարարվել փաստարկման տեսության և հոգելեզվաբանության մշակած տվյալներով, առանց հաշվի առնելու զրուցակիցների անհատական վարքի դրսևորումները նրանց հաղորդակցական ռազմավարությունն ու մարտավարությունը: Օրինակ, կրկնվող հարցման մարտավարությունը կարող է համարվել պատասխանից խուսափելու ռազմավարության տարատեսակ:

Սրանից հետևում է, որ գրավոր և բանավոր դիսկուրսի կառուցվածքն ուսումնասիրելիս անհրաժեշտ է հաշվի առնել խոսքաստեղծման ռազմավարությունը և մարտավարությունը լեզվի տարբեր դրսևորումներով շարահյուսական, իմաստաբանական, գործաբանական, ոճական:

Խոսքային ռազմավարության կազմավորման համար կարևորվում է մեկ այլ գործոն՝ հաղորդակցական իրադրության գնահատումը: Այդ պատճառով էլ, հաղորդակցման ընթացքում կարող է տեղի ունենալ նաև պլանի վերանայում, տարատեսակ ճշգրտումներ, որոնք ցույց են տալիս, որ խոսելու ընթացքում կարևոր է նաև խոսքային վարքի մեկ այլ օժանդակ գործոն՝ կողմնորոշվելու գործոնը, որը կառավարում է խոսքային գործունեությունը (Гальперин, 1976, 65):

Ահա թե ինչու փոխներգործության ընթացքում հաղորդակցական իրադրության գնահատականի փոփոխման հետ փոխվել կարող է նաև խոսողների խոսքային ռազմավարությունը: Ինչ վերաբերում է լսողի կամ ընթերցողի խոսքի հասկացման ռազմավարությանը, նրա համար կարևոր են այն սպասումները, որոնք կազմավորվում են տվյալ համատեքստում, ինչպես նաև խոսողի հաղորդակցական նպատակի մեկնաբանությունը զուգադրելով իր իսկ նպատակին: Բնական է, որ ռազմավարության ընտրությունը և դրանց

իրագործումը խոսքում կախված է գրուցակիցների ծանոթության աստիճանից, հասարակական դիրքից, անձի տիպից, նրա տարիքից և սեռից: Ներդաշնակ փոխներգործությանը նպաստում են հասարակական նորմերի ընդհանրությունը, գրուցակիցների հետաքրքրությունների համընկնումը, հանգամանքների բերումը և այլն:

Ուստի կարող ենք եզրակացնել, որ խոսքային ռազմավարության ընտրությունն ինչ-որ տեղ կախված է անձի հոգեբանական տիպից, պայմանավորված է նրա հոգեվիճակով:

Կարևորելով «խոսող անհատ» հասկացության ներմուծումը գործաբանական լեզվաբանության կողմից, Ի. Սուսովը նշում է, որ այս հասկացությունը թույլ է տալիս խոսքային գործունեության մեջ տեսնել նախ և առաջ անհատին խոսող անձին, որը գիտակցում է իր դերը-խոսքային գործունեության ընթացքում, ունի իր վերաբերմունքը խոսքում ընդունված սկզբունքների հանդեպ, որոնք նա կիրառում է: Խոսքային ակտերը, խոսքային գործողությունները ոչ միայն խոսքի դրսևորման ձևեր են, այլ նաև անհատի գիտակցված և նպատակաուղղված գործունեություններ:

Խոսքը կազմավորում է անհատը. նա հաստատում է, նկարագրում, ապացուցում, համոզում, խնդրում, հրամայում, հարց տալիս, առաջարկ անում կամ ընդունում, խոսք տալիս և դժու, ծաղրում փաստերը, մարդկանց կամ ինքն իրեն, վիրավորում գրուցակցին կամ հաճոյախոսում և այլն: Խոսքի արտաբերման ընթացքում անհատն ինքն է ընտրում որոշակի խոսքային միջոցներ՝ մարտավարություն: Նա կարգավորում է խոսքի ընթացքը՝ ըստ իր սեփական կամ ընդհանուր նպատակների. նա ստեղծում է համապատասխան հաղորդակցական իրադրություն, ընտրում է գրույցի թեմա, որոշում է իր խոսելաոճը (չեզոք, պաշտոնական, ընկերական), հետևում է խոսակցական կարգախոսներին, կամ ընդհակառակը, փորձում է փոխել գրույցի թեման, խախտում է հաղորդվող տեղեկատվության քանակի և որակի կարգախոսները, կամ տեղեկատվության մատուցման ձևը (Сыков, 1989, 9):

Ուսումնասիրելով խոսքային ռազմավարության դրսևորման ձևերը՝ կարելի է առանձնացնել մի շարք գործոններ, որոնք նպաստում են դրան. խոսքային համայնքի հասարակական գիտակցության մեջ գոյություն ունեցող առարկայական աշխարհի իմացությունը, ընդհանուր նորմերը և գնահատականները: Այս գործոնների համախմբումը յուրաքանչյուր խոսքային իրադրության ժամանակ նպաստում է ռազմավարության կառուցմանը:

Սրանից հետևում է, որ հաղորդակցական գործընթացի հետազոտությունը պետք է կատարել տարբեր հայեցակերպերով, որոնք հանդես են գալիս որպես տարբեր լեզվական մակարդակներ: Մակրոմակարդակում կարելի է լուծել այնպիսի ընդհանուր, գլոբալ խնդիրներ, որոնք կապված են գրուցակիցների ներգործության ներդաշնակ և հակամարտ հաղորդակցման սկզբունք-

ների հետ: Ըստ այդմ՝ որոշվում է խոսքային ռազմավարության «ռեգիստրը»․ հարծակվողական, պաշտպանողական, խուսափողական, հաշտվողական և այլն:

Միջին մակարդակում լուծվում են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են խոսքային գործողության մտքի և խոսքային (ռազմավարական) գործողությունների տրամաբանական հաջորդականությունը․ ինչն ինչից հետո է ասված:

Ռազմավարության իրականացման միկրոմակարդակը համապատասխանում է խոսքի հետազոտության այն փուլին, երբ ուսումնասիրվում են խոսքաստեղծման կոնկրետ միջոցները, խոսքային ակտերի տեսակները, դրանց իրականացման միջոցները (ուղիղ և անուղղակի խոսքային ակտեր): Այս փուլում քննարկվում են այնպիսի ռազմավարական հարցեր, ինչպիսիք են խոսքի ընդհատումը և խոսքային ակտերի քերականական ձևավորման առանձնահատկությունները:

Հաղորդակցումը որպես ներակա գիտելիքի համակարգ դիտելը թույլ է տալիս նոր տեսանկյունից քննել լեզվի մինչխոսքային (անհատական, անգիտակից) և հաղորդակցական (խոսքային, գիտակցված) մակարդակների փոխհարաբերությունը:

Խոսքային փոխներգործության վերլուծության ժամանակ պարզվում է, որ խոսքային ակտերի առանձին տեսակներ տարբեր դեր են կատարում ռազմավարությունն իրագործելու ընթացքում: Այսպիսով, ինչպես նշում է Պ․ Ջերնեցկին, հաստատման խոսքային ակտերը կարող են կատարել փաստարկման, արդարացման, ճշգրտման ռազմավարական գործառույթներ, ինչպես նաև քննադատության, մերժելու, վիրավորելու դեր և այլն: Սույն ռազմավարական գործողությունները, անշուշտ, նպաստում են հիմնական հաղորդակցական նպատակի իրականացմանը (Зернецкий, 1988):

Պարզ է դառնում, որ երկխոսության կապակցված խոսքի շրջանակներում, իհարկե, միևնույն խոսքային ակտը կարող է կիրառվել տարբեր հաղորդակցական ռազմավարություն իրականացնելու համար:

Մեր վերլուծությունը կատարել ենք գեղարվեստական գրականությունից դուրս գրված հարցուպատասխանական երկխոսական միավորների հիման վրա, և ինչպես ցույց է տալիս մեր ուսումնասիրությունը, երկխոսության մեջ զեղչում պարունակվում է և հարցական, և պատասխան ընդմիջարկումներում:

Հարց ու պատասխանի մեջ կիրառվող զեղչման անհրաժեշտությունը հաճախ բխում է նախկինում ասվածից կամ էլ տվյալ հաղորդակցական իրադրությունից (խոսողի ժամանակը սուղ է, խոսելու համար անհարմար պահ է և այլն): Այդ պատճառով էլ, մենք առաջարկում ենք դիտել զեղչումը որպես խոսքային ռազմավարություն՝ բառերի տնտեսում, որը բխում է հաղորդակցման անհրաժեշտությունից:

Բառի տնտեսումը ռազմավարություն է, որը կիրառելով խոսողը նպատակ է դնում ձգձգել պատասխան տալը, ժամանակ է շահում մտածելու կամ հարմար պատասխան գտնելու նպատակով: Այն նաև հստակ պատասխանից խույս տալու միջոցներից մեկն է: Երբեմն, հաղորդակցական իրադրությունից կախված, առաջանում է նաև ժամանակի սահմանափակում, ինչի պատճառով գրուցակիցները ստիպված են կարճ խոսել՝ խուսափելով ավելորդ տեղեկատվությունից: Ժամանակի շահումը հաճախ դրսևորվում է բառերի խնայողության, միտումնավոր բացթողման միջոցով. խնայել ժամանակը, լռել շատ բաների մասին այն դեպքում, երբ գրուցակիցները մտերիմներ են և ունեն համատեղ գիտելիք, երբ հաղորդակցման ժամանակը սուղ է կամ էլ, երբ պատասխան տվողը հարցն անիմաստ, անտեղի է համարում և նախընտրում է կարճ և կոնկրետ պատասխան տալ: Դիտարկենք նման մի օրինակ.

Bernard:	Because you said what would I have and I said what was there, and you said...
Jenny:	All right, egg?
Bernard:	<u>Yes. O.K.</u>
Jenny:	How?
Bernard:	<u>Bacon.</u>
Jenny:	If there is.(Cooper, 145)

Սույն երկխոսական միավորում, որն ընթանում է համատեղ գիտելիքի մեծ պաշար ունեցող մտերիմ ընկերների միջև, զեղչված խոսքի կիրառման նպատակը հիմնականում ժամանակ շահելն է: Նման դեպքերում, երբ գրուցակիցներն իրար «կես բառից» հասկանում են, ասույթի թեմատիկ մասը համարվում է ավելորդ և դուրս է մղվում խոսքից: Նման դեպքում, անշուշտ, չի կարելի ասել, որ խախտված է քանակի կարգախոսը, քանի որ պատասխան ընդմիջարկումը պարունակում է հարցին համապատասխան տեղեկատվություն:

Բառի տնտեսումն ընդհանուր խոսքային քաղաքականություն է, որն ունի իր մասնավոր դրսևորումը տարբեր հաղորդակցական իրադրություններում՝ հանդես գալով որպես խոսքային մարտավարություն: Այսպես, զեղչված հարցական ասույթները կատարում են որոշակի խոսքային մարտավարություն՝ արտահայտելով խոսողի երկմտանք, զարմանքը, ծաղրը: Զեղչման մարտավարական նշանակությունը կարող է լինել նաև համառումը, զնահատանքը (համակրանք, հակակրանք), ճշտումը:

Պատասխան պարունակող հաստատական ասույթում զեղչումը հետևյալ հաղորդակցական մարտավարական նպատակները կարող է հետապնդել. խուսափելով, զնահատանք (համակրանք, հակակրանք), հստակեցում, հաստատում:

Դիտարկենք զեղչման խոսքային մարտավարության մի քանի օրինակ:

ների հետ: Ըստ այդմ որոշվում է խոսքային ռազմավարության «ռեգիստրը».
հարծակվողական, պաշտպանողական, խուսափողական, հաշտվողական և
այլն:

Միջին մակարդակում լուծվում են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են
խոսքային գործողության մտքի և խոսքային (ռազմավարական) գործողու-
թյունների տրամաբանական հաջորդականությունը. ինչն ինչից հետո է ասված:

Ռազմավարության իրականացման միկրոմակարդակը համապատաս-
խանում է խոսքի հետազոտության այն փուլին, երբ ուսումնասիրվում են
խոսքաստեղծման կոնկրետ միջոցները, խոսքային ակտերի տեսակները,
դրանց իրականացման միջոցները (ուղիղ և անուղղակի խոսքային ակտեր): Այս
փուլում քննարկվում են այնպիսի ռազմավարական հարցեր, ինչպիսիք են
խոսքի ընդհատումը և խոսքային ակտերի քերականական ձևավորման
առանձնահատկությունները:

Հաղորդակցումը որպես ներակա գիտելիքի համակարգ դիտելը թույլ է
տալիս նոր տեսանկյունից քննել լեզվի մինչխոսքային (անհատական, անգի-
տակից) և հաղորդակցական (խոսքային, գիտակցված) մակարդակների
փոխհարաբերությունը:

Խոսքային փոխներգործության վերլուծության ժամանակ պարզվում է,
որ խոսքային ակտերի առանձին տեսակներ տարբեր դեր են կատարում
ռազմավարությունն իրագործելու ընթացքում: Այսպիսով, ինչպես նշում է Պ.
Ջերնեցկին, հաստատման խոսքային ակտերը կարող են կատարել փաստարկ-
ման, արդարացման, ճշգրտման ռազմավարական գործառույթներ, ինչպես նաև
քննադատության, մերժելու, վիրավորելու դեր և այլն: Սույն ռազմավարական
գործողությունները, անշուշտ, նպաստում են հիմնական հաղորդակցական
նպատակի իրականացմանը (Зернецкий, 1988):

Պարզ է դառնում, որ երկխոսության կապակցված խոսքի շրջանակ-
ներում, իհարկե, միևնույն խոսքային ակտը կարող է կիրառվել տարբեր
հաղորդակցական ռազմավարություն իրականացնելու համար:

Մեր վերլուծությունը կատարել ենք գեղարվեստական գրականությունից
դուրս գրված հարցուպատասխանական երկխոսական միավորների հիման
վրա, և ինչպես ցույց է տալիս մեր ուսումնասիրությունը, երկխոսության մեջ
գեղչում պարունակվում է և հարցական, և պատասխան ընդմիջարկումներում:

Հարց ու պատասխանի մեջ կիրառվող գեղչման անհրաժեշտությունը
հաճախ բխում է նախկինում ասվածից կամ էլ տվյալ հաղորդակցական
իրադրությունից (խոսողի ժամանակը սուղ է, խոսելու համար անհարմար պահ
է և այլն): Այդ պատճառով էլ, մենք առաջարկում ենք դիտել գեղչումը որպես
խոսքային ռազմավարություն՝ բառերի տնտեսում, որը բխում է հաղորդակցման
անհրաժեշտությունից:

Բառի տնտեսումը ռազմավարություն է, որը կիրառելով խոսողը նպատակ է դնում ձգձգել պատասխան տալը, ժամանակ է շահում մտածելու կամ հարմար պատասխան գտնելու նպատակով: Այն նաև հստակ պատասխանից խույս տալու միջոցներից մեկն է: Երբեմն, հաղորդակցական իրադրությունից կախված, առաջանում է նաև ժամանակի սահմանափակում, ինչի պատճառով զրուցակիցները ստիպված են կարճ խոսել՝ խուսափելով ավելորդ տեղեկատվությունից: Ժամանակի շահումը հաճախ դրսևորվում է բառերի խնայողությամ, միտումնավոր բացթողման միջոցով. խնայել ժամանակը, լռել շատ բաների մասին այն դեպքում, երբ զրուցակիցները մտերիմներ են և ունեն համատեղ գիտելիք, երբ հաղորդակցման ժամանակը սուղ է կամ էլ, երբ պատասխան տվողը հարցն անիմաստ, անտեղի է համարում և նախընտրում է կարճ և կոնկրետ պատասխան տալ: Դիտարկենք նման մի օրինակ.

Bernard:	Because you said what would I have and I said what was there, and you said...
Jenny:	All right, egg?
Bernard:	<u>Yes, O.K.</u>
Jenny:	How?
Bernard:	<u>Bacon.</u>
Jenny:	If there is.(Cooper, 145)

Սույն երկխոսական միավորում, որն ընթանում է համատեղ գիտելիքի մեծ պաշար ունեցող մտերիմ ընկերների միջև, զեղչված խոսքի կիրառման նպատակը հիմնականում ժամանակ շահելն է: Նման դեպքերում, երբ զրուցակիցներն իրար «կես բառից» հասկանում են, ասույթի թեմատիկ մասը համարվում է ավելորդ և դուրս է մղվում խոսքից: Նման դեպքում, անշուշտ, չի կարելի ասել, որ խախտված է քանակի կարգախոսը, քանի որ պատասխան ընդմիջարկումը պարունակում է հարցին համապատասխան տեղեկատվություն:

Բառի տնտեսումն ընդհանուր խոսքային քաղաքականություն է, որն ունի իր մասնավոր դրսևորումը տարբեր հաղորդակցական իրադրություններում հանդես գալով որպես խոսքային մարտավարություն: Այսպես, զեղչված հարցական ասույթները կատարում են որոշակի խոսքային մարտավարություն՝ արտահայտելով խոսողի երկմտանք, զարմանքը, ծաղրը: Ձեղչման մարտավարական նշանակությունը կարող է լինել նաև համառումը, զնահատանքը (համակրանք, հակակրանք), ճշտումը:

Պատասխան պարունակող հաստատական ասույթում զեղչումը հետևյալ հաղորդակցական մարտավարական նպատակները կարող է հետապնդել. խուսափել, զնահատանք (համակրանք, հակակրանք), հստակեցում, հաստատում:

Դիտարկենք զեղչման խոսքային մարտավարության մի քանի օրինակ:

Հետևյալ երկխոսական միավորում զեղչված հարցական ասույթը կատարում է երկմտանքի մարտավարություն: Վերջինս հոգեկան իրավիճակ է, որն արտահայտում է տարակուսանք, վարանում, կասկած կամ երկբայություն:

Church: But Dron, they don't think your health's affected? **Big strong man like you?**

Dron: I am a big strong man then? Still? I mean, from where you're standing I'm a big strong man?

Church: You are indeed. Strong. Huge. (Terson, 140)

Չըրչը և Դրոնը հիշում են իրենց երիտասարդության տարիները, իրենց անցած կյանքի մանրուքները: Չըրչի կարծիքով Դրոնը դեռ ուժեղ է և առողջ, բայց Դրոնն այլևս վստահ չէ իր ուժերի վրա և կարծում է, որ այդ ամենը մնացել է անցյալում: Այնուհանդերձ Չըրչը պնդում է, որ դա այդպես է: Դիմելով Դրոնին հարցական ասույթով Չըրչը փորձում է ճշտել իրեն հասած տեղեկատվության ճշմարտացիությունը. "But Dron, they don't think your health's affected?": Այնուհետև նա կազմում է զեղչված հարց, որում պահպանված է միայն ասույթի այն մասը, որով տրամաբանված է իր երկբայության, երկմտանքի տեղին լինելը. "Big strong man like you?": Չըրչին անհասկանալի է, թե ինչպես կարելի է Դրոնի պես ուժեղ մարդուն հիվանդ և թույլ համարել:

Այժմ դիտարկենք արձագանք-ընդմիջարկման մեջ կիրառված զեղչման մի օրինակ, որը կատարում է խուսանավելու մարտավարություն:

Երբեմն պատասխանողը չգիտի իրեն տրված հարցի հստակ և ճիշտ պատասխանը, և, չցանկանալով խախտել հաղորդակցման որակի կարգախոսը, տալիս է անստույգ և երկիմաստ պատասխան: Լինում են նաև հաղորդակցական իրադրություններ, երբ պատասխանողը գիտակցաբար է թաքցնում ինչ-որ փաստեր, չի ցանկանում միտույննափոր խախտել համատեղ հաղորդակցման սկզբունքը և տալիս է անորոշ, ընդհանուր պատասխան ոչ հստակ տեղեկատվություն, որը կարիք ունի բացատրության:

Խուսանավելու մարտավարության կիրառման ժամանակ խոսքի մեջ հաճախակի են կիրառվում տարակուսանք, տվյալաճանաչ արտահայտող խոսքային միջոցները:

John: I suppose it means this burn has been fished.
Mr Farquharson: I'm afraid it looks like that, my bay. Still, perhaps it has almost never been fished. Eh?

John: **Yes. Almost never ... Perhaps.**
Mr Farquharson: But I think we ought to leave it and come back another day, a bit earlier. Don't you?

John: No. I want to fish now. (Finlay, 214)

Ինչպես տեսնում ենք, խոսողը սկզբում հստակ պատասխան է տալիս. "Yes", այնուհետև փորձում է թուլացնել իր ասածի կտրուկությունը, ներմուծելով թերահավատություն, անվստահություն արտահայտող զեղչված

ասույթներ. “Almost never”, “Perhaps”. Ինչպես տեսնում ենք, խոսքի դադարը սույն երկխոսական միավորում ևս կիրառվում է խոսողի երկմտանքն արտահայտելու համար: Նրան ժամանակ է պետք, որ մտածի, թե ինչ ասի, ասի՝ թե՞ չասի, և նա դադար է տալիս խոսքին:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ զեղչման գործաբանական արժեքը գնահատելու համար անհրաժեշտ է հետազոտել վերջինիս ռազմավարական գործառույթը խոսքում այն դիտելով որպես ներակա ասելիքի արտածման խոսքային քաղաքականություն:

Օգտագործած գրականության ցանկ

1. Анисимова Е. Е. О коммуникативно-прагматических нормах текста. Сб. Прагматика и структура текста, Вып. 209, Москва, 1983.
2. Гальперин Н. Я. Введение в психологию. // Москва: изд-во МГУ, 1976.
3. Зернецкий П. В. Лингвистические аспекты теории речевой деятельности //Языковое общение: проценты и единицы, Калинин, 1988.
4. Паронян И. А. Конвенции и правила речевого общения. Кантех, сб. науч. тр. Ереван, 2001, N4.
5. Сусов И. П. Личность как субъект языкового общения. // Личностные аспекты языкового общения. Международный сборник научных трудов, Калинин, ГУ, 1989.
6. Ыйм Х. Проблема понимания связного текста // Синтаксический и семантический компонент лингвистического обеспечения. Новосибирск, 1979.
7. Beck G. Sprechakte und Sprechfunktionen. Tübingen: Niemeyer, 1980.
8. Beyer K. Sprechen und Situationen. Tübingen: Niemeyer, 1976.
9. Rehbein J. Komplexes Handeln: Elemente zur Handlungs Theorie der Sprache. Stuttgart: Metzlu, 1977.